600.0034.15.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2017 թվականի №34Ա
քաղ. Երևան

«ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-97, №9/1-150, №9/1-152 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի №717Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի փետրվարի 1-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝
   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի հունիսի 20-ին «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման №9/1-97 թույլտվությունը.
   2) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը 2005 թվականի դեկտեմբերի 16-ին տրամադրված №9/1-150 և դեկտեմբերի 19-ին տրամադրված №9/1-152 ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման թույլտվությունները.

3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 15-ի «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №9/1-97, №9/1-150 և №9/1-152 թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №717Ա որոշումը:

2. «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2017 թվականի փետրվարի 1-ը հաշվարկված 202 567 (երկու հարյուր երկու հազար հինգ հարյուր վաթսունյոթ) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԽԱՍՈՒՐՈ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որը ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 փետրվարի 2017թ.